496 Դժվար է մենակ ապրելը,

1. Դժվար է մենակ ապրելը,
Երբ կողքիդ քեզ օգնող չկա,
Դժվար է մենակ ապրելը,
Երբ քեզ հասկացող չկա:

Դու լա՛վ հիշիր, որ կա՛, կա՛ Մեկը քեզ սիրող,
Որ Նա քեզ երբեք չի թողնի:
Ո՞վ Հիսուս, ինձ գթա՛, ինձ գթա՛, ողորմի՛ր,
Ազատի՛ր ինձ այս տանջանքից:

2. Օգնիր՝ ապրեմ խաղաղ կյանքով,
Քո սիրով և օրհնությունով,
Օգնիր՝ ապրեմ ես սուրբ կյանքով,
Քո խոսքերիդ օրհնությունով:
Օգնի՛ր, որ ես լինեմ, միշտ լինեմ Քեզ լսող՝
Ապրեմ միայն Քեզանով,
Դու հիշի՛ր, որ փուչ են երազները այս կյանքի,
1) Միայն Տերը քեզ չի թողնի:
2) Միայն Հիսուսը չի լքի: